ՀԿԴ/0181/06/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Տ.Դավթյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Մարտիրոսյան

2026 թվականի մարտի 19-ին քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ս.ՉԻՉՈՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2025 թվականի մարտի 20-ի որոշման դեմ պաշտպան Հ.Մովսիսյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2018 թվականի հուլիսի 2-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ [redacted] քրեական գործը՝ [redacted]ընկերության կողմից 427.903.695 ՀՀ դրամ գումարի չափով պակաս հարկեր վճարելու դեպքի առթիվ:

2024 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ս.Հակոբյանի կողմից որոշում է կայացվել [redacted] նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2024 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների գլխավոր վարչության հինգերորդ վարչության պետի տեղակալ Գ.Թադևոսյանի կողմից որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալ [redacted] ձերբակալելու մասին:

2024 թվականի սեպտեմբերի 20-ին մեղադրյալ [redacted] ձերբակալվել է:

Նույն օրը [redacted] մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի սեպտեմբերի 21-ի որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարվել է մասնակի, և մեղադրյալ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ մեղադրյալ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգվել է 2 (երկու) ամսով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարվել է մասնակի, և մեղադրյալ [redacted] նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

5. ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ս.Հակոբյանի և մեղադրյալ [redacted] պաշտպան Հ.Մովսիսյանի հատուկ վերանայման բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր՝ 2025 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը մասնակի բեկանել և կայացրել է դրան փոխարինող դատական ակտ՝ բավարարելով ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության հինգերորդ վարչության պետի տեղակալ Գ.Թադևոսյանի միջնորդությունը, և մեղադրյալ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգել է 2 (երկու) ամսով՝ դրանում հաշվակցելով մեղադրյալի տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ [redacted] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգվել է 1 (մեկ) ամիս ժամկետով:

7. Մեղադրյալ [redacted] պաշտպան Հ.Մովսիսյանի հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր՝ 2025 թվականի մարտի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 20-ի որոշումը թողնելով անփոփոխ:

8. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ [redacted] պաշտպան Հ.Մովսիսյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի հիմքերը, դրանք հիմնավորող փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

9. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել դատական սխալներ՝ միջազգային պայմանագրի, նյութական օրենքի և քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են վարույթի ելքի վրա:

9.1. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 4-րդ մասի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-4-րդ մասերի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի 4-րդ մասի, 311-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի, 389-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի, 393-րդ հոդվածի 1-ին մասի, Վճռաբեկ դատարանի՝ բողոքում վկայակոչված նախադեպային որոշումների պահանջները:

9.2. Բողոքաբերը, համաձայնելով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ գործի դատաքննության փուլ անցում կատարելուց հետո գործի դատաքննություն իրականացնող դատարանը միայն կարող է համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարանը, որի կողմից արդեն իսկ քննարկվել և լուծվել է մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, դատական ակտը չի կարող բեկանվել կամ փոփոխվել, միևնույն ժամանակ, անընդունելի է համարել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ այդ նույն պայմաններում Վերաքննիչ դատարանը չի կարող անհամաձայնություն հայտնել ստորադաս դատարանի դատական ակտին և առարկայազուրկ է բողոքի հիմքերին ու հիմնավորումներին բովանդակային անդրադարձ կատարելը:

9.3. Բողոք բերած անձը գտել է, որ թեև պաշտպանական կողմի հատուկ վերանայման բողոքը ենթակա էր մերժման՝ իրավահարաբերության փոփոխության պատճառաբանությամբ, սակայն թիվ ԵԴ/0700/06/18 և թիվ ԵԱԴԴ/0023/06/17 գործերով Վճռաբեկ դատարանի՝ նախադեպային դիրքորոշումների և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր բովանդակային անդրադարձ կատարել բողոքի հիմքերին և հիմնավորումներին և արձանագրել [redacted] իրավունքների ու օրինական շահերի խախտման փաստերը՝ հնարավորություն տալով նաև վերջինիս ստանալ այդ խախտումների հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում կամ իր որոշման շրջանակներում հիմնավորվել թիվ ԵԴ/0700/06/18 և թիվ ԵԱԴԴ/0023/06/17 գործերով Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումից շեղվելը, որոնք չի կատարել:

Հետևաբար, բողոքաբերի պնդմամբ՝ նման պայմաններում [redacted] դատական պաշտպանության իրավունքը դարձել է ձևական ու պատրանքային, նրա կալանքի օրինականությունը չի որոշվել, հատուկ վերանայման բողոքի հիմքերին ու հիմնավորումներին չանդրադառնալով ու [redacted] նկատմամբ թույլ տրված խախտումները չարձանագրելով՝ Վերաքննիչ դատարանն իմաստազրկել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երաշխիքները, ինչի հետևանքով [redacted] զրկվել է իր խախտված իրավունքների դիմաց հետագայում հնարավոր փոխհատուցում ստանալու իրավունքից:

9.4. Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ [redacted] նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանք, այն է՝ [redacted] չի կատարել իրեն մեղսագրվող արարքը, չի հաստատվել վերջինիս կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը, լրացել են նրա քրեական հետապնդման ժամկետները, ինչպես նաև փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից չեն հիմնավորվել և դատարանների կողմից պատճառաբանված չեն հաստատվել ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված իրավաչափության մնացյալ պայմանները, նրա օրինական վարքագիծն ապահովելու համար խափանման միջոց կալանքի կիրառման անհրաժեշտությունը բացակայել է, այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հարցը դատարանի կողմից պատշաճ քննարկման առարկա չի դարձվել և խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի չեն առնվել մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները, [redacted] ազատությունից զրկվել է օրենքով չնախատեսված կարգով, վարույթն իրականացնող մարմինը չի հիմնավորել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև նրա նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը, և միաժամանակ, Առաջին ատյանի դատարանը դուրս է եկել իր իրավասության սահմաններից և չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

10. Ամփոփելով վերոգրյալը, բողոքաբերը խնդրել է փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի մարտի 20-ի որոշումը՝ արձանագրելով Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 20-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի մարտի 20-ի որոշումներով թույլ տրված՝ [redacted] իրավունքների ու օրինական շահերի խախտումները՝ կայացնելով դրան փոխարինող դատական ակտ:

<u>Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

11. [redacted] նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն արարքի համար, որ *«(...) նա, հանդիսանալով* [redacted] *ընկերության խորհրդի անդամ, ի պաշտոնե իր կարգադրիչ և այլ լիազորություններն իր, ինչպես նաև ուրիշ անձանց օգտին օգտագործելու նպատակով օգտագործել է ՓԲ ընկերության շահերին հակառակ, որի*

արդյունքում ընկերության օրինական շահերին պատճառվել է էական վնաս, ինչն էլ իր հերթին առաջացրել է այլ ծանր հետևանքներ:

Բացի այդ, [redacted] *և մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, կատարել են փողերի լվացում՝ փոխանցել, ձեռք են բերել և օգտագործել, փաստացի տիրապետել և տնօրինել հանցավոր ճանապարհով՝ առևտրային կազմակերպության ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու արդյունքում ստացված՝ առանձնապես խոշոր չափերի գույք, որոնք նպատակ են ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, պատկանելիությունը, գույքի իրական բնույթը և ծագման աղբյուրը:*

(...)»[1]:

12. Առաջին ատյանի դատարանը 2025 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) [Դ]ատարանը գտնում է, որ մեղադրյալ* [redacted] *նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը պետք է երկարաձգել, քանի որ այլընտրանքային խափանման միջոցների, այդ թվում՝ դրանց համակցված կիրառումն անբավարար է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար, ուստի վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար մեղադրյալ* [redacted] *նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը պետք է երկարաձգել մեկ ամսով՝ մինչև 2025 թվականի մարտի 20-ը (...)»*[2]:

13. Վերաքննիչ դատարանը 2025 թվականի մարտի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Մինչ* [redacted] *նկատմամբ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման իրավաչափությանն ըստ էության անդրադառնալը, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Ազգուշ Մարտիրոսյանի վերաբերյալ քրեական վարույթով Վճռաբեկ դատարանը նախաադեպային դիրքորոշում է արտահայտել առ այն, որ մինչդատական վարույթն ավարտվելուց և առաջին ատյանի դատարանի կողմից տվյալ քրեական վարույթն ստանձնելուց հետո, մինչդատական*

---

[1] Տե՛ս նյութեր, հատոր 6, թերթեր 251-260:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 9, թերթեր 357-424:

վարույթում, որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման՝ հատուկ վերանայման կարգով բողոքարկման արդյունքում, վերադաս դատարանն իրավասու չէ բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը:

Այլ խոսքով՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ հստակ արձանագրել է, որ մինչդատական վարույթը մեղադրական եզրակացությամբ ավարտելն ու գործը դատարան մուտքագրելը ենթադրում է իրավահարաբերության այնպիսի փոփոխություն, որն այլևս սահմանափակում է վերաքննիչ դատարաններին նախորդ իրադրության առկայության պայմաններում կայացված դատական ակտերը վերանայելու և դատական երաշխիք տրամադրած դատարանի դատական ակտը բեկանելու հնարավորությունից, ինչն անմիջապես բխում է դատաքննություն իրականացնող դատարանների ներքին անկախությունը չսահմանափակելու և անկաշկանդ արդարադատության իրականացման ապահովման նպատակներից:

Սույն քրեական վարույթի շրջանակներում «Դատալեքս» տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ [redacted] *վերաբերյալ քննվող քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է, վարույթը հասցեագրվել է մեղադրական եզրակացությամբ, մուտքագրվել ՀՀ հակակոռուպցիոն դատարան, ստացել թիվ* [redacted] *դատաքննական համարը և 2025 թվականի մարտի 6-ին վարույթ ստանձնվել դատավոր Վ.Դոլմազյանի կողմից: Ավելին՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից սույն քրեական վարույթով արդեն իսկ կայացվել է երեք դատական նիստ՝ 2025 թվականի մարտի 11-ին, 12-ին և 14-ին, նախնական դատալսումների շրջանակներում, ինչը ենթադրում է, որ քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ դատաքննություն իրականացնող դատարանը քննարկման առարկա է դարձրել նաև մեղադրյալների նկատմամբ մինչդատական վարույթում կիրառված խափանման միջոցի վերանայման հարցը: Ավելին՝ բողոքի հեղինակի կողմից տեղեկացվել է նախագահող դատավորի կազմին, որ անձի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխվել է և վերջինի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային համակցված խափանման միջոց, ինչպիսի տեղեկատվությունը հասցեագրվել է նաև քրեական վարույթն ըստ էության քննող*

դատավորի աշխատակազմից: Այս հանգամանքն արդեն իսկ օբյեկտիվ արգելք է ստեղծում սույն հատուկ վերանայման բողոքը բավարարելու և ստորադաս դատարանի դատական ակտի հետ անհամաձայնություն հայտնելու կապակցությամբ, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ արդեն իսկ առարկայազուրկ է բողոքի հիմքերին և հիմնավորումներին բովանդակային անդրադարձ կատարելը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն քրեական վարույթով առկա իրավահարաբերության փոփոխության և Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշման ուժով մեղադրյալ [redacted] *պաշտպան Հայկ Մովսիսյանի հատուկ վերանայման բողոքը ենթակա է մերժման (...)»*[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք մեղադրյալ [redacted] պաշտպան Հ.Մովսիսյանի հատուկ վերանայման բողոքն ըստ էության քննության չառնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

15. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

---

[3] Տե՛ս նյութեր, հատոր 11, թերթեր 187-193:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:*

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Նույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.*

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք փրամադրելու դեպքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննվելու իրավունքից, որոնց ընդդատությանը կամ իրավասությանն այն վերապահված է օրենքով:

(...)

4. Վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերը, որոնք առնչվում են անձի իրավունքներին և ազատություններին, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով ենթակա են դատական ստուգման»:

16. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել առ այն, որ թեև Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, որն ամրագրում է կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքը, պայմանավորվող պետություններին չի պարտավորեցնում կալանքի օրինականության քննության համար երկրորդ իրավասու ատյան նախատեսել, սակայն նման համակարգ ունեցող պետությունը պարտավոր է վերաքննիչ ատյանում կալանավորված անձանց սկզբունքորեն ընձեռել նույն իրավունքները, ինչ առաջին ատյանի դատարանում[4]:

17. ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով անձի նկատմամբ կալանքի կիրառման դատական որոշման բողոքարկմանը, նշել է, որ եթե օրենսդիրը որոշել է սահմանել միջանկյալ դատական ակտերի մի մասի՝ Հայաստանի Հանրապետությունում կառուցակարգված եռաստիճան դատական համակարգի շրջանակներում վիճարկելու հնարավորություն, ապա բոլոր դատական ատյաններում՝ նրանց սահմանադրական գործառույթների սահմանների հաշվառմամբ, պետք է նախևառաջ օրենսդրորեն ապահովվեն դատական պաշտպանության արդյունավետությունը և արդար դատաքննության երաշխիքները[5]:

---

[4] Տե՛ս, *inter alia*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ilnseher v. Germany* գործով 2018 թվականի դեկտեմբերի 4-ի (գանգատներ թիվ 10211/12, 27505/14), *Navarra v. France* գործով 1993 թվականի նոյեմբերի 23-ի (գանգատ թիվ 13190/87) վճիռները:

[5] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.3-րդ կետը:

Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների վերաբերյալ հիմնահարցերին, ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը[6]:

---

[6] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936, 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշումների՝ համապատասխանաբար 6-րդ և 7-րդ կետերը:

18. Քննարկվող հիմնարար իրավունքների էությանն անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «*Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները*»[7]:

18.1. Վճռաբեկ դատարանը *Ազգուշ Մարտիրոսյանի* գործով արձանագրել է, որ մինչդատական վարույթն ավարտվելուց և առաջին ատյանի դատարանի կողմից տվյալ քրեական վարույթն ստանձնելուց հետո, մինչդատական վարույթում որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման՝ հատուկ վերանայման կարգով բողոքարկման արդյունքում, վերադաս դատարանն իրավասու չէ բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը[8]:

18.2. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակում իրականացվող դատական վերանայումները սահմանափակված են ոչ միայն ներկայացված հատուկ վերանայման բողոքի հիմքերով և այն հաստատող փաստերով, այլ նաև տվյալ քրեական վարույթի ընթացքով, մասնավորապես այն պայմաններում, երբ դատական վերանայման ընթացքում փոխվել է քրեական վարույթի փուլը կամ վարույթը արդեն իսկ ավարտվել է նախնական քննության փուլում: Այսպես, հատուկ վերանայման ընթացքում բողոքի

---

[7] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը:

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ազգուշ Մարտիրոսյանի* գործով 2023 թվականի օգոստոսի 9-ի թիվ ԵԴ1/0138/06/23 որոշման 14-րդ կետը:

հիմքերը և հիմնավորումները կանխորոշում են դատական վերանայման ընթացքում դատարանի կողմից փաստացի քննարկման առարկա հանդիսացող իրավական և փաստական հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ կատարված վերլուծությամբ և պատճառաբանությամբ է դատարանը կայացնում դատական ակտը: Ինչ վերաբերում է դատական վերանայման սահմանափակման մյուս դեպքին, ապա այս դեպքում բողոքի սահմաններից զատ նաև սահմանափակված է դատարանի կողմից հնարավոր կայացվող դատական ակտերի շրջանակը, իսկ ավելի հստակ՝ վերանայում կատարող դատարանը բացառապես կարող է ստորադաս դատարանի դատական ակտը թողնել անփոփոխ: Միաժամանակ վերանայման վարույթի ելքի սահմանափակումը չի կարող հանգեցնել դատարանի կողմից չպատճառաբանված դատականի ակտի կայացմանը, մասնավորապես դատական վերանայման արդյունքում դատարանը նույնիսկ այդ պարագայում պետք է իրականացնի իր դատավարական գործառույթը՝ քննության առնի ներկայացված բողոքը, մատնանշի և պատճառաբանի ստորադաս ատյանի կողմից կատարված դատական սխալները, հակառակ պարագայում և չի ապահովվի անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իրականացնելով ոչ իրական այլ պատրանքային դատական պաշտպանություն: Նշվածն էլ ավելի է կարևորվում անազատության մեջ գտնվող անձի իր նկատմամբ կալանք (տնային կալանք) կիրառելու կամ դրա ժամկետը երկարաձգելու որոշման դատական վիճարկման պարագայում, քանի որ նշված պայմաններում դատական համակարգը անձի արդյունավետ դատական պաշտպանությունից զատ նաև պետք է ապահովի անձի կողմից իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ որոշման արդյունավետ վիճարկման և վերանայման իրական հնարավորությունը: Նշված դիրքորոշումը բխում է նաև Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավակիրառ պրակտիկայից, քանի որ դատական ակտի բեկանման իրավական անհնարինության պայմաններում Վճռաբեկ դատարանը իր վարույթներով մշտապես ըստ էության քննության է առնում ներկայացված բողոքը[9]:

---

[9] Տե՛ս, ի թիվս այլնի, Վճռաբեկ դատարանի՝ *Ռուբեն Աղաբաբյանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԵԱԴԴ/0023/06/17 որոշման 22-րդ կետը, *Արթուր Եգանյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԴ/0034/06/19 որոշման 22-րդ կետը:

19. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

[redacted] նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով[10]:

- Առաջին ատյանի դատարանը 2025 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ մեղադրյալ [redacted] նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգել է մեկ ամսով՝ մինչև 2025 թվականի մարտի 20-ը[11]:

- Վերաքննիչ դատարանը 2025 թվականի մարտի 20-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մերժել է՝ փաստելով, որ քրեական վարույթի դատական քննության փուլ անցնելն արդեն իսկ օբյեկտիվ արգելք է ստեղծում հատուկ վերանայման բողոքը բավարարելու և ստորադաս դատարանի դատական ակտի հետ անհամաձայնություն հայտնելու կապակցությամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ նախնական դատալսումների փուլում մեղադրյալ [redacted] նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխվել է և վերջինի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային համակցված խափանման միջոց, ինչպիսի տեղեկատվությունը հաստատվել է նաև քրեական վարույթն ըստ էության քննող դատավորի աշխատակազմից, որպիսի հանգամանքներն արդեն իսկ օբյեկտիվ արգելք են ստեղծում հատուկ վերանայման բողոքը բավարարելու և ստորադաս դատարանի դատական ակտի հետ անհամաձայնություն հայտնելու կապակցությամբ, գտել է, որ արդեն իսկ առարկայազուրկ է բողոքի հիմքերին և հիմնավորումներին բովանդակային անդրադարձ կատարելը[12]:

20. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-18.2-րդ կետերում մեջբերված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, քննության չառնելով մեղադրյալ [redacted] պաշտպան Հ.Մովսիսյանի կողմից բերված հատուկ վերանայման բողոքը, անհամաչափորեն

---

[10] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:
[11] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

սահմանափակել է մեղադրյալի դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն իր դատողությունների հիմքում որպես ելակետ ընդունել է Վճռաբեկ դատարանի՝ *Ազգուշ Մարտիրոսյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ մինչդատական վարույթն ավարտվելուց և Առաջին ատյանի դատարանի կողմից տվյալ քրեական վարույթն ստանձնելուց հետո, մինչդատական վարույթում որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման՝ հատուկ վերանայման կարգով բողոքարկման արդյունքում, վերադաս դատարանն իրավասու չէ բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը և ըստ էության քննության չառնելով պաշտպան Հ.Մովսիսյանի՝ մեղադրյալ [redacted] նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացրած հատուկ վերանայման բողոքը, իրականացրել է ոչ թե իրական, այլ պատրանքային դատական պաշտպանություն, ինչի հետևանքով [redacted] զրկվել է դատական վերանայման պայմաններում իր նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման որոշման բովանդակային և առարկայական քննարկման հնարավորությունից: Ավելին, Վճռաբեկ դատարանն այս համատեքստում հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել առ այն, որ վերանայման արդյունավետության երաշխիքը շարունակում է գործել անգամ անձի ազատ արձակումից հետո, քանի որ նախկին կալանավորը կարող է ազատ արձակումից հետո ևս ունենալ իր կալանքի օրինականության որոշման իրավաչափ շահ:[13]

Այլ կերպ՝ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկված լինելու փաստը չպետք է ազդեցություն ունենա նախքան այդ կայացված, սույն դեպքում՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված

---

[13] Տե՛ս, *inter alia*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kováčik v. Slovakia* գործով 2011 թվականի նոյեմբերի 29-ի, Osmanović v. Croatia գործով 2012 թվականի նոյեմբերի 6-ի վճիռները:

կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու արդյունավետության վրա:

21. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ [redacted] դատական պաշտպանության և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքները սահմանափակելը չի կարող բխել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից:

22. Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ [redacted] պաշտպան Հ.Մովսիսյանի հատուկ վերանայման բողոքն ըստ էության քննության չառնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում հնարավորություն չունի անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 9.4-րդ կետում մատնանշված փաստարկներին՝ նկատի ունենալով, որ նրա վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանում քննարկման առարկա չի դարձվել:

23. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ՝ ՀՀ քրեակրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված սկզբունքի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցելու համար[14]:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի կապակցությամբ պետք է հանգի համապատասխան հետևության՝ հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

---

[14] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18, *Ավաթ Ամինի* գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալ [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մարտի 20-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Ս.ՉԻՉՈՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

_____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

_____ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ